

Եւ այս տեղ մէկ մեծ տարակուսանք մը
մեր մտքերը պաշարած՝ առջևնիս սարսափելի

վի՛հ մը կը բացուի, և ասով բոլոր յոյսերնիս կը տկարանայ, և ակնկալութիւննիս կ'ոչնչանայ. Պատճառ . . . :

Ետը էն երևելի (աներեւոյթը ժամանակին) և գլխաւոր պատճառը սա է թէ՛ տարիէ մը ՚ի վեր Մզգային Աւերոնական և Բնդհանուր Արշուժիւնները ՚ի սէր և յօգուտ Եզգի օր օրի օտարաձայն վնասակար կարծիքները իրենց մէջէն արտաքսելով՝ փոխարէն Հայկական ճաշակին համեմատ և անոր նպատամատոյց ըլլալու կարծիքներով միաբանելու, ու անով մէջերնին սիրոյ սերտ կապակցութիւններն հաստատելու զբաղած և ՚ի գործ դրած ատեննին, միւս կողմէն ցաւալից հայեցողածքներով կը տեսնենք որ բովանդակ Հայ ժողովուրդը՝ փոխանակ Մզգային կառավարութեան այս աշխիւ կամքերուն ու խորհուրդներուն համակամ և համախորհուրդ ըլլալով՝ ամեն ինքրոյ մէջ նորա հետ միաբան ըլլալու, անոր (ժողովուրդեան) մէջէն մէկ (յուսալի է սակաւ ու տկար) գունդ մը կերպ կերպ օտար սկզբունքներու, ինքնաստեղծ դրութիւններու, ու (հոգւոյ և մարմնոյ) վնասակար կարծիքներու ենթակայ եղած՝ գրեթէ ամեն օր Եզգին մէջ խռովութիւն խռովութեան, բաժանումն բաժանման վրայ կը յարուցանէ:

Եզգային Արշուժիւնը ամեն վայրկեան Եզգին ճշմարիտ օգուտը կը մտածէ, իսկ այս օրակսեռ գունդը անտի խորհուրդներով միակերպ նորին բարի մտածմունքները կը շփոթէ . . . : Համառօտի և բացայայտ խօսելով, Եզգային ընդհանուր Արշուժիւնը Հայ ժողովուրդեան մեծ և զօրաւոր բաց խոհեմ, ազաւնիամիտ և Ետուածալիտ մասը ուղղակի՝ դէպ ՚ի Եզգին ունեցած իւր բարի և անկեղծ դիտաւորութիւններուն համախոհ գտնելով՝ Հայկական Ա. և անրիժ Արօնը, Ակեղեցին, Մախահարց աւանդութիւնները, Հայրենի սովորութիւններն ու արարողութիւնները (Քեդէս և Կոթ, Քեդէս և Կոթ) քաջաբար պահելու, հսկելու, ու պաշտպանելու (զի սուրբ և պաշտելի են), և ասոնցմով ընդհանուր Եզգը միութեան ու խաղաղութեան կեդրոնը հասցնելու անգաղար կը ջանայ ու կ'աշխատի, ասդիէն այն յիշատի սակաւ և տկար, բաց անխոհեմ, խորամանկ, խառնակիչ ու հաւատաւաճառ խումբը՝ մէկ քանի աներեւոյթ եմքերու առաջնորդութեամբ զօրացելու հանապազ կը պատերազմի վերոյիշեալ Եզգին այն մեծ մասին Ետուածահաճոյ և Եզգաշահ

դիտաւորութեանցը դէմ . . . :

— Ի՛նչ կը խօսիս ս իմ համարձակախօս Բեւեւս, ի՛նչ, միթէ այս ըսածներովդ զիս պիտի ՚ի մահ մատնես . . . բաւական չեղա՞ն արդեօք մինչև ցարդ . . . պատճառաւոր ընդունած հարուածներս, կրած վիշտերս, նիւթական նեղութիւններս . . . Դ՛հա համարձակ կը խօսիս, ես կը բամբասուիմ, Դ՛հա յայտնի ճշմարտութիւն կը քարոզես, ես ստախօսաց կողմէն կը նախատուիմ, Դ՛հա ազգը ազգասիրութեան կը հրաւիրես, ես խումբ մը ազգատեսացներու ձեռք կը մատնուիմ. վերջապէս Դ՛հա միակերպ Եզգիդ և Արօնքիդ նախանձախնդիրն եղած՝ զանոնք անողորմաբար նախատողները կեղեւ հրապարակաւ կը խայտառակես ու անոնց Դ՛հախառն նպատակ կը կը յայտնես, ես ամեն վայրկեան անոնց գաղտագողի հնարքներովը կը հալածուիմ, կը չարաչարուիմ, և դեռ . . . , հիմայ ալ կեղեւ այնպիսի խօսքեր կը զրուցես որ՝ անոնց արձագանքը չես գիտեր թէ՛ մըր տեղեր պիտի երթայ, և ի՛նչ կիրքեր պիտի գայրացնես . . . :

Ա՛ր: — Ե՛յն ես գիտեմ — Բըդեօք սա Բեւեւս: — Չէ՛ — Հապա՛: — Դեռ ժամանակը կէս գիշեր է, արշալոյսին կրնամ իմացնել — Գոնէ՛ սա հասկըցուր թէ՛ որո՞նց կիրքերը պիտի զայրանան: — Ե՛յն ալ Դ՛հա կըրնաս երեւակայել — Հասկըցայ, չըլլայ որ սա հրապարակաւ շուհանները, սրճարանները, գինետոնները, շոգենտները, նաւակները, և այլ ուրիշ անյարմար տեղեր յանիրաւի վիճաբանող տղաքները ըլլան, — չէ՛ Դ՛հա ալ, այն ինչ որ Դ՛հա խօսքը մի կըլլայ, դեռ անոնք նոր մօրերնուն գիրկէն ելած՝ իրենց հօրը հետ շուկայ կամ դարոց գացող անփորձ տղաքներ են — Ետանկ է նէ սա բան գործ չունեցող ու գիշեր և ցորեկ տողիս անդին շարլաթանութիւն ընող պատահականները ըլլալու են: — Չէ՛, չէ՛, ո՛ր իմ Բեւեւսս, անոնք ալ չէ՛ վասն զի շարլաթանութիւնը լեզուի յատկացեալ բնութիւն մը ըլլալով՝ երբեմն անկիրթ մարդկանց անասնաբերաններէն առատ առատ դուրս կը բղխէ, նոյնպէս արտառարկողութիւնը որ արհեստ մըն է՝ որ յաճախ շարլաթանութեան ենթակայացեալ լեզուատէրերը յամենայն ժամ ՚ի գործ կ'ածեն, և ահա այսպիսիները ինչ որ տեսնեն լսեն, առանց վայրկեան մը ժամանակ անցնելու՝ անմիջապէս ՚ի տունս, ՚ի փողոցս և ՚ի հրապարակ բերներնէն շողիքներ թափթրելով՝ իրենց ունկնդիր

«որներն ու Հրէից ժողովրդապետը» (Աբրեհի
թէ Փփփի խմբագիրը նամակին խարդախու
թիւն է ըրեր — բոլոր Հրէից աղբիւրն էր
— խօսքերը անոր մէջ տեղէն դուրս հանելով, եւ
թէ չէ ըրեր, ուրեմն նամակագիրը պակաս է
գրեր. հոսկ յետոյ եթէ որ այսպիսի հրաւեր
մը չէ եղած՝ քննիչները մեծ պարտազանցու
թեան մը մէջ գտնուելու են, զի այս բանը ընե
լովին ոչ միայն Աբրեհի (Փփփի) ընել, այլ կա
րելի է երկու օրէնք միանալուն հաւանականու
թիւնը կունենային. Օւրմանալու հրաւեր)։

Ինչ որ է նէ՝ «հոն թէ քահանայք և թէ
ժողովական անդամք ՄԻԿ ԵՆՏՍՍԻՊԵ
ՅԻՎ, տղան որ ԵՏ ԴԵՌՆԵՅ իր գիտա
ւորութենէն. գործելով թէ ՄԵՂՔԻ Ի,
ինքը տղայ է դեռ, և եթէ ծնողացը հետ վէճ
մը ունի նէ կը հաշտեցնեն զինքը, (ասիկայ նե
րելի և օրինաւոր է, բայց դարձեալ չէ հոս,
որովհետեւ առջեւ օրերը քանի մը անգամ այսպի
սի հարցուփորձերը կատարուելու և տղուն կող
մէն համոզել պատասխաններ ընդունուելու է.
ըստ նամակին ասութեան) եւ թէ արդէն
Քրիստոնէայ եղողներն անգամ ազգը նայած
չունին ու խեղճ մնացած են. և թէ ինքն ալ խեղճ
կ'ըլլայ և այլն» Ինչն է, Ինչն է. Ինչն է քարոզեր այս
մարդիկը հոգինիդ սիրէք. Քրիստոնէութիւն,
թէ չէ Քրիստոնէութեան դէմ բարբառանք.
Հրէայ մը Քրիստոնէայ ընելու, չէ նէ իւր գա
տապարտելի կրօնքին մէջ ամուր մը հաստատու
լու են ջանացեր. քանի որ տղան իր գիտաւո
րութեանը մէջ հաստատ կեցած և ունենալը
նոր վիճակին ամեն կերպիւ գոհ եղած ատեն
փոխանակ ծնողացը առջին մէկ խօսքով անոր
հաստատութիւնն առնելով զինքը արքայու
թեան փառաց հրաւիրելու՝ այս կերպ ըսելնե
րով տղուն միայն փոխած, ու անոր Քրիստոն
էայ ըլլալուն վրայ ունեցած ջերմ եռանդը պա
ղեցուցած՝ զայն ի հոգին յաւիտենից մատնելու
են հոգացեր

Ինչ էք ըրեր ո՞ր Քրիստոնէայ և Եւրոպայ
քննիչք, այս կերպ խօսքերնիդ այն միջոցին
սոսկալի գայթակղութիւն մը չէր պատճառուեր. . .
մտքերնիդ չեկաւ արդեօք նոյն վայրկեանը Փրկ
չին մերոյ այն ահարկու ՎԵՅՐ որ ըսած է
«Սայ որ գայթակղեցուցանէ ի միում փոքրը
կանցս յայտնանէ որ հաւատան յիս» Ան
դառնալի՜ վճիռ, Բայց Քրիստոնէայ և կրօնա
սէր ընթերցող մի՛ այդքան զարհուրիր հոս՝ զի

կարելի է այս խօսքերը արտասանողները կեր
պիւ մը (անուննին ի մեզ անծանօթ) տղէա և
ի՞ Ս. Գիրս անտեղեակ աշխարհական անձինք
ներ եղած ըլլան, հապա յականէ յանուանէ յիշ
ուած կրօնական անձի մը խօսքերուն ի՞նչ պիտի
ըսենք, և հիմայ որ զինքն ու ըսածը բացայայտ
պիտի յայտնեմք, երբոր տեսնէք զինքը արդեօք
ո՞րչափ պիտի զարմանալով զարմանաք, և լսելով
նորին խօսքերը դողալով պիտի դողաք։

Ուրեմն տեսնելու ո՞վ է եղեր այս ժողովա
կանը ու Եւրոպայ քննիչը ու լսեմք անոր խո
սքն. պատուէրները դէպ ի՞նչ պիտի Հրէային.
«նաև, կը գրէ նամակը, Հիւնքեարպէյէնտեան
Տ. Յովհաննէս քահանայն ՍՏԻՊՈՂԱՆԵՆ
Ե ՅԵՆՈՒՄԵՆԵԱՆ կերպիւ մը զրու
ցեց թէ, Եստուած պատուիրած է Մովսէսին
ձեռօքը, որ հօրդ մօրդ հնազանդիս ու անոնց
հրամանը կատարես և այլն, և այլն»։

Ի՞նչ կեցցէ, կեցցէ և յաւերժ կեցցէ ինչ
և ինչն ալ քահանայն. Ո՞ր օրէնքի կը ծա
ռայէ այժմ այս քահանան, Մովսէսիկա՞ն թէ
Քրիստոնէական. արդեօք գտնուած տեղը
Քրիստոնէական կրօնքի ենթակայ եղող Հա
յոյ Պատրիարքարան ըլլալը յանկարծ մոռնա
լով՝ այն տեղը Մինա Լեւան ստոյգոսն է կար
ծեր։

Մենք գիտէինք որ հին օրէնքին մէջ Եստուած
Մինա Լեւանը վրայէն այս պատուէրը Մովսէսին
ձեռօք տուած ատեն՝ նախ այն ատեն հրէայնեքը
Եստուծոյ սիրելի և հաւատացեալ ժողովուրդ
էին. երկրորդ այս պատուէրը ոչ առաջնապէս
այլ երկրորդապէս տուաւ, այսինքն նախ «սիրես
ցես զՏէր Եստուած քո՝ այսինքն ճշմարիտ
հաւատքդ, և ապա «պատուեալ զհայր քո և
զմայր՝ այսինքն ծնողքդ. Հին օրէնքին այսպէս,
հիմա տեսնելք Քրիստոնէական կրօնքին հիմ
նադիրը Քրիստոս Եստուածը ի՞նչ կը քարոզէ։

Սուրբ Եւեռարանը՝ որ ի Քրիստոսէ ա
ւանդեալ նոր օրէնքին պատուիրանաց տախտակը
կը համարուի, նորին մէջէն կ'ուսանիմք թէ՝
երբ պատանի մը Քրիստոս Եստուծոյն մօտենա
լով հարցուց թէ՝ ի՞նչ ընեմ որ յաւիտենական
կեանքը ընդունիմ. եթէ որ Հիւնքեարպէյ
յէնտեանը հոն ըլլար հաւանական է որ պիտի
ըսեր թէ՝ ինչ որ կուզես ըրէ՝ նայէ որ ծնողացդ
հրամաններէն չի զարտուղես և ա՛յ բանի մէջ
անոնց հրամանը կատարես. բայց Քրիստոս
Եստուածը որ ամենուս բուն և անխալ վար

լողները հրապարակաւ իրենց գործած յանցանքը յետս կոչելով ապաշխարեն , զի կարելի է այս անցքին այս կերպ կատարուած օրէն 'ի վեր ազգերնուս լրութեանը վրայ եկող այսքան ձախորդութիւնները այս պատճառաւ և ասոնց երեսէն է Մտոր ալ տարակոյս չի պիտի ունենամք , եթէ որ հաւատամք թէ 'ի յԱստուծոյ տւանդեալ բոլոր Սուրբ Գրոց խօսքերը անժըխտելի և անայլալեի են , և նոցունց լոյսով լուսաւորուած հաւատքնիս ճշմարիտ է , այո՛ ճշմարիտ է և անայլալեի : Ուրեմն Ուրեմն հարկ է որ մեր ճշմարիտ Քրիստոնեայ և ճշմարիտ կրօնասէր ու աւանդապահ Հայ ժողովուրդը այսպէս հաւատան ու այսպէս ալ հարկ եղածը արդեամբք 'ի գործ դնեն , և մենք մեր քննադատութիւնը առաջ տանիմք

Երգարեւ Նամակին թուականին նայելով յիշեալ անցքը հինգ վեց ամիս առաջ կատարուած գործ մըն է , և վրան այսքան ժամանակ անցնելով հարկ չէր ըլլար այս կերպ երկար խորհրդածութիւններ ընել , բայց որովհետեւ (յսածնուն) ուրիշ անգամներ ալ ասոր նման պատահարներ հանդիպած ու հանդիպելու վրայ են , ուստի այս բանս չէ միայն կրօնասիրութեան պահապանութիւն , և հարկային պարտաւորութիւն , զոր ինչպէս կը կարծէ Փաշալեան , այլ քրիստոնէական Ս . կրօնի սկզբունքներուն դէմ գործողութիւն մը համարուելով , (ինչպէս վերը բացատրեցինք) ըստ նուիրական պարտաւորութեան մերոյ սիրելի Ազգս այսպիսի փնտախար , և նոր սկզբունքներէ յառաջ եկած վարմունքէ մը ըզգուշացնելու նպատակաւ այս անգամ հարկ կը ըլլայ որ այս բանիս վրայօք ըստ բաւականի սաստիկ ճշմարտութեամբ մը խորհրդածեմ Ուստի քանի որ նպատակս հոգեւորապէս բարի և օգտակար է , յուսամք թէ անուախտ հազա ալ , նա մանաւանդ այսպիսի գործոց դժբաղդաբար միջամուխ եղող անգէտ անհատներն՝ անշուշտ մեր գրածներուն ներդրամիտ պիտի լինին տեսնելով մեր անկեղծ դիտաւորութիւնը

Նսկէ վերջը ըսելիքներնիս

Յաջորդ թերթով :

— Ենցեալ թուով յիշուած Այլազովսքի Գերապատիւ Տ . Գաբրիէլ Ազգասէր Այլազապետին Այլազապետին վրայօք ըսելիքներնիս

զալ անգամին կը թողումք , զի նախ թէ այս անգամուան թերթերնիս չի ներեց , երկրորդաբար թէ 'ի յիշեալ Աստուծաբան Այլազապետին և անոր այս Գրութեանը վրայօք քանի մը խօսքով անցնիլ չեմք ուզեր , որովհետեւ այս Հոգեւոր առաջնորդին ատենէ մը 'ի վեր իւր արժանաւորութեանը դէմ յուղուած սխալ տարաձայնութիւններն ու այս պատճառաւ յառաջ եկած անարգութիւնները կ'ստիպեն զԱրեւելեանը , որ իւր արթուն հսկողութեամբ ըստ կարի հարկ եղած պաշտպանութիւններն 'ի գործ դնէ , մնացեալը նորին քաջ և անյաղթ գրչին թողելով :

ՆԵՐՍԻ ՍՐԵԱՋԱՆ ՀԻԻՐԵՐ

Ի ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ա երջապէս Ներսիս Սեդուի և Եանց որկորին պատուելով ու անճոռնի ձայներով պօռացած , կանչուըւտած , և Եանց , և այլ ուրիշ վատ ածականներով նախատուած երկու հրաւիրեալ Սրբազան հիւրերն հասան 'ի Պոլիս , և բազմեցան 'ի Պատրիարքարանն հայոց : Եանց մէկը Հալէպի Առաջնորդ Նիկողոս Եպիսկոպոսն , և միւսը Թէքրիտաղի Առաջնորդ Թադէոս Եպիսկոպոսն է , որոնց մէկը բազում ժամանակէ 'ի վեր միւսը մօտերս եկած են : Ինչպէս որ այս ունկամբ լսուած Սեդուի և Եանց համար դեռ մեզի համար Սրբազան անձինքները հոն տեղ աչօք տեսանք , երբ Եանց արժանի Հովիւներ ըլլալը իմացանք , և ասիկայ ատանկ ըլլալուն էն մեծ ապացոյցը սա է թէ 'մինչև յարգ իրենց վրայօք եղած ամբաստանութիւնները ստուգուած չեն , ուրեմն երանի այս անգիններուն որ իրենց հոն ներկայ եղած ատենին դիմացին դեռ դատաւարաւ մը չէ ելած Ինչ և իցէ ասոնք հոն այս վիճակիմէջ տեսած ատեննիս՝ անդիէն Թադէոս Սրբազանէն 60 ցումալ , 600 տալտակ , 6,000 լիւր (չենք գիտեր որ 60,000 եւսման , 600,000 մոշորանք ալ կ'ընէ մի նամակին մէջ , ան աղէկ մը չք տեցինք) կերող խելքիկ և անմեղ ողան ալ տեսանք 'ի Խառփաղ , 'ի Բերա , 'ի Վալաթիա , 'ի Պոլիս , 'ի Խարա աղած , 'ի Բէհալահանէ , 'ի Բանկալթի , և այլ ուրիշ տեղեր : Բայց թըռուառ իրաւցընէ 22 օր հիւանդ պառկելէն նի հարցած , Եւրոպայի մեծ և վարպետ բժիշկնէ

րու ձեռք դարձանուելու կարօտ եղած, մարմնոյն վրայ այն բեռներն, ապտակներուն տեղերը կապուողած, ոտքերը ախարանի չուաններէն միտերը կտրտած, (հէլէ փառք Աստուծոյ որ 60 ցուպի հարուածները պզտիկ մէկ նշան մը չէին թողուցեր) և վերջապէս ապրելուն յոյսը բոլորովին կորսնցուցած

Բարեմիտ ընթերցող ըսածներուս վրայ չափազանց պիտի խնդան չէ նէ սաստիկ ցաւ մը պիտի զգաս, ըսէ շուտ ըսէ, էթէ պիտի խընդատ էր . . . է. էթէ պիտի ցաւիս ՍՈՒՏ է ՍՈՒՏ

Հիմայ հոս քեզի պզտիկ հաշիւ մը ցուցունեմ, առ սա թուղթը և գրիչը ձեռքդ և 48 էն 60ը, սխալ ըմբ 60 էն 48ը հանես նէ ի՞նչ կը մնայ անդին, 12 . ուրեմն այս հաշիւը մտքիդ մէջ ձիւղ ըմբռնէ, ատոր վրայօք գալ անդամքեղէ ըսելիք ու նիւ, և այժմ ժամանակ չունիմ:

ԹՈՒՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՌՈՍ

ԿԱՍ

ՆԱԽԱԿԱՆ ԳԱՍԱԳԻՐԻ ԹՈՒՄԱՆՈՒԹԵԱՆ

Երկասիրեալ Մեծարգոյ Պ. Ստեփան, Պ. Պողոս Փափաղեանց ուսումնական պատանւոյ, և տպագրեալ արդեամբք Հայկազնեան անձնանուէր Բնկերութեան որ ի Պէշեքթաշ:

Եյս օգտակար գրքոյիս ինչպէս վերնադրէն կ'երևի՝ Ազգային դպրութեան նուիրեալ ըլլալով դպրոցներու մէջ ասով Հայ մանկանց թուական ուսմունքը դիւրըմբռնելի պիտի ըլլայ:

Եւ իրաւի ուսումնական հեղինակը Ազգասիրական զգացմունքներէ շարժեալ ներկայ աշխատութեամբը որքան կարողացեր՝ ջանացեր է որ այս շահաւոր ուսմունքը Հայկական դպրութեան մէջ թէ դասատուաց և թէ ուսանողաց դիւրութեան ընէ: Ուստի յուսամք որ ասով թէ Ազգի բարեջան դասատուները, և թէ ուսումնասէր ազգայնէրը ամեն կերպիւ գոհ եղած՝ նորին երկասէր հեղինակը իւր նպատակին պիտի հասցընեն:

Եյս շահաւետ գրքոյիս կը ծախուի բոլոր Հայ դրամաձառներուն քով, զին 3 դահեկան:

Եւ արդ հոս չեմք կրնար այս և ասոր նման օգտակար գրուածոց ի ըյս ելելուն արդեամբք նպաստող Հայկազնեան Բնկերութեան վրայօք քանի մը խօսք չըրած անցնիլ:

Բաւական տարիներէ հետէ Ազգին մէջ խօսքով և անուամբ միայն բազում ընկերութիւններ լսուած էր և դեռ կը լսուին: Բայց նոցանց արդիւնքները երբեք տեսնուած չէր և կարծեմք տեսնուելիք ալ չունի, բաց ի այս Հայկազնեան անձնանուէր Բնկերութեան ապագանպատ արդիւնքներէ:

Եյս յիշեալ բարենպաստակ Բնկերութեան անունը Ազգին մէջ հռչակուած օրէն միակերպ առ հասարակ Ազգին նպաստամատոյց ըլլալու յաջող գործերը պայծառագոյն կը տեսնուին: Եւ ստուգիւ եղած է որ իր ձեռնհասութենէն վեր գործերու ալ ձեռք զարկած ու յաջողած է: որ ինչպէս գլխաւորներէն մէկն է ընդհանրապէս գիտութեան ըյսը Ազգին մէջ ծաւալել, և ասոր համար հազարաւոր բեռնակիրներն, ջրկիրներն, անտէր և խեղճ դրսեյիներն, նաեւ մուրացկանները ձրիապէս և զարմանալի անձնանուէր աշխատութեամբ մը կը թել, ու զանոնք ուսմամբ և գիտութեամբ զարգացընել, և անանկով զանաք ալ քաղաքակրթեալ մարդկանց ընկերութիւններուն մասնակից ընել տալու ընկերութեան ամենամեծ հոգն ու ջանքը եղած է: Աեցցե՛ն ուրեմն Հայկազնեան շահաւոր Բնկերութիւնն ու նորին աղետախոհ Մեղամները: Եւ կեցցե՛ն ամեն անոնք, որոնք այս Բնկերութեան բարի տնօրէնութիւններուն բանիւ և արդեամբ ձեռնառու և ջանակից կը հանդիսանան:

Չը մոռնանք հոս յիշելու նաեւ այս Բնկերութեան էն մեծ մէկ գովելի վարմունքը, զոր անտարակոյս երկար ժամանակ ապրելուն զօրաւոր միջոց մը պիտի ըլլայ, այսինքն լսածնուս Հայկազնեան Բնկերութիւնը իրեն էապէս նըպատակ ըրած է եղեր՝ որ և իցէ (գժբազդաբար ծագած) ազգային երկպառակութեանց ու տարաձայնութեանց մէջ առանց մէկ կողմ բռնելու չեզոք մնալով միշտ երկու յուզեալ կողմանց միջավայրը կեցած՝ միակերպ անոնց յաջմէ և յահեկէ խաղաղութեան բարի ձեռքեր երկընդունել, ջանալով զերեք խաղաղելու ու միացընելու:

Եթէ որ այս բանս ստոյգ է, ճշմարիտ և անկեղծաբար կըսեմք թէ՛ այս Բնկերութիւնը Ազգին մէջ իբրեւ անկործան բերք մը կեցած ժամանակին շատ մեծ և զօրաւոր գործեր պիտի տեսնէ: Քանզի երկրիս վրայ որ միաբանութիւններն, ու որ ընկերութիւններն որ իրենց մէջ

հակառակութեանց չար ոգին չեն կրեր, և անոնց թիւնախից հնարքներէն կը հեռանան՝ անշուշտ հաշարաւոր տարիներ աւանց փոքրիկ մէկ փաստու կտորին, և միակերպ արագընթաց շարժումներով կը յառաջանան ու կը զարգանան: — Խտրողութիւն սիրողը՝ երկիրը կը ժառանգէ — կրօն Սուրբ Պօղոսը: Հեռեւորար Հոկտեմբերեան Բնկերութիւնն ալ որ իսկապէս իրեն նպատակ դրած է խտրողութիւնը՝ աներկբայ իրեն երկնային օգնութիւններ հասած և անով Բնկերութիւնը իւր բարի վստճանք պիտի գտնէ, և Այդս ալ նորին շնորհիւր առաջ առաջ արդիւնքներ պիտի վայելէ:

Ուրեմն բարեմիտ Աղայինք որ աջօր նախելու, և ի՞նչ խորին զգայունքներ ունենալուն այս Բնկերութեան վրայ

Այս օր միայն ինքը աղքատիկ բայց գործը հարուստ Բնկերութիւնը տարին 7—8 հազար դահէկան երեւաւորով ինքզինք կը մատակարարէ, ինչպէս որ ամեն տարի՝ մանաւանդ այս տարուան համաժ հաշուեցուցակէն ճշգրտապէս կիմացուի. . . , սակայն անուշը լսուած և ինքը հարուստ Իսկիւտարու Բաժանորդական Բնկերութիւնը ի՞նչ կը գործէ մինչ ցայս վայր. . . և կամ ինչո՞ւ ցարդ երկու տարուան հաշուեցուցակը չէ հրատարակեր. . . և թէ ի՞նչ նպատակաւ իւր բաժանորդներէն տարեկան պարտք չեն պահանջեր. . . .

Ըստք առ այժմ Արեւելեանիս միջոցաւ բազմաց խնդրանքը մասնաւոր հարցումներ են, որ անպատճառ և անյապաղ պատասխաններ ընդունուելու կ'սպասուին:

Մեղուն 131 թուոյն վերջին երեսը տեսնուած պատկերին վրայօք համառօտ զըուցաւորութիւն մը:

Ե. Դ. Մեղուն կարգացիր պարոն Մ. Ե.

Մ. Ե. Ե. յո ես ամեն ատեն զայն ջերմեռանդաբար կը կարգամ, բայց այժմեան քու հարցուցածդ որ թուոյն համար է:

Ե. Դ. Իշթէ սա 131 թիւը, որուն վերջին երեսը ընդդէմ երախտապարտութեան և համեստութեան անվայել պատկեր մը կայ ձեռացեալ:

Մ. Ե. Պատկեր, ընդդէմ համեստութեան. վայ ձեզ խաւարեալ. . . .

Ե. Դ. Երանի՛ ձեզ լուսաւոր. . . .

Մ. Ե. Ի՞նչ հասկըցաք դուք անկէ, և ի՞նչ բան կը նշանակէր այն դիտէք արդեօք:

Ե. Դ. Չէ, մենք խաւարեալքս հիշ կըրնա՞նք հասկընալ, և կամ կարո՞ղ ենք գիտնալ անոր ինչ նշանակելը, քանի որ ոչէր, և ոչէր մարդիկներ ենք. դուք որ ինքքդ ինքնիդ լուսաւորեալ և գիտնական, և մանաւանդ քաղաքս կըրթութեան յետին ծայրը հասած անհատներ կոչած էք, պէտք է որ անոր ինչ ըլլալը մեզի բացատրէք:

Մ. Ե. Ապրիս Ե. Դ. և շատ ապրիս, ահա այսպէս երբ մեր առջին կը խմարահիք, մենք ալ ձեզի ըսածներնուս մեկնութիւնը և ցուցուցածներնուս բացատրութիւնը կուտամք: Ահեցէ՛ Մեղուն, և կեցցէ՛ մեր նոր զրութիւնը,

Ե. Դ. Խեղեպնալ պէտք չէ Պարոն, ինչ որ պիտի ըսեա այս մասին շուտով ըսէ՝ ետքը գնա՛ այն կեցցէներդ քու համախոհներուդ դիմացը կատարէ:

Մ. Ե. Չէ՛, երբեմն մեզի զուարճութիւն պէտք է, և ասոր ամենեւին նեղանալ հարկ չէ. . . ինչ որ է նէ, հիմայ այն պատկերին ինչ ըլլալուն տեղեկանալ՝ կուզես. ահա բացատրութիւնը:

Այսինքն, տեսնուած այն պատկերը երկու բան կը նշանակէ, առաջինը որ ինչպէս յայտնի է, մօրէ մերկ մարդ մը և ձեռքը շապիկ մը բռնած ոտքէն հագնել կուզէ, և դիմացն ալ ուրիշ մէկ անձ մը կայ կեցած, որով աջ ձեռքով կը հասկըցունէ անոր սխալ ընթացքը. . . .

Ե. Դ. Ի՞նչ ըսիր, մօրէ մե՞րկ, ձեռքը շապիկ:

Մ. Ե. Ե. յո այո, մօրէ մերկ:

Ե. Դ. Թա՛ւ ուրեմն անոր երեսին. . . չէք ամչնար պէ մարդիկ, և անգամ մը չէք խորհիր թէ Մեղուն օրագիր է, կրնայ ըլլալ որ ամեն հասակի մարդիկ զայն ձեռուրնին առած անոր վրայ նային ու գննեն և անով արդեօք չըլլար որ համեստաբարոյ և անմեղանձանց մտքերը պղտորուին: Ե. յո որ օրէնքէն առնուած է, և կամ որ լուսաւորութեան հետեւանքն է, ըսէ նայիմ:

Շարունակելի:

Խմբագիր—ՏՏօրէն
Մ. Գ. ՏԵՅԻՐՄԷՆՅԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԲԻՒՐԻՃՅԱՆ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅԵՆԱՆՔԻՆ